Օրվա դասի պլան

29 /11/ 2023թ.

Վայոց ձորի մարզ Սարավանի հիմնական դպրոց

Դասվար՝ Մարիամ Հակոբյան

Դասարան – 4 -րդ

Առարկա - Երաժշտություն

Թեմա - <<Կոմիտաս>>, նախագծային աշխատանքի ցուցադրում, ներկայացում

Օգտագործվող նյութեր – Սովորողների պատրաստած պաստառներ, ուսումնասիրությունների ընթացքում գրված պլակատներ, Ձևավորող գնահատման տեսակ՝<<Ինքնագնահատման անիվ >>, ահիկաշար:

Նպատակը – Հայ ազգային երաժշտության հիմնադիր, կոմպոզիտորական դպրոցի նեերկայացուցիչ մեծ Կոմիտասի կենսագրական տեղեկատվության , նրա ստեղծագործական կյանքի մանրամասների մասին ծանոթանալու և զարգացնելու կարողունակության զարգացում:Հայ ազգային երաժշտությունը Կոմիտասի հորովելները, աշխատանքային , ծիսական երգերը ճանաչելու և սիրելու կարողունակության ձևավորում, զարգացում:

Վերջնարդյունքներ – Սովորողները կարողանան ներկայացնել իրենց ստեղծած աշխատանքը՝ սահիկաշարի միջոցով: Մտքերն արտահայտեն պարզ՝ չշեղվելով թեմայից:Ճանաչի և գնահատի հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասի ստեղծագործությունները, հետաքրքիր պատմությունները կոմիտասի կյանքից ,ներկայացնի երգը մենակ և խմբով:Նկարագրի իր ստացած տպավորությունները, լրացնի իր <<Ինքնագնահատման անիվը>> ՝ կատարելով վերլուծություն:

Դասի ընթացքը.

Ուսուցիչ	Սովորողներ
. Սովորողներին ներկայացնում է նախագծային աշխատանքը ցուցադրելու, ներկայացնելու կարգը, նպատակը, աշխատանքի ընթացքում մտքերն հստակ , ազատ արտահայտելու կարևորությունը, բարեվարքության կանոնների պահպանումը:	. Ներկայացնում են իրենց պատրաստած աշխատանքները, պաստառները, պլակատները Կոմիտասի նկարներով և նախապես արդեն բաժանված թեմաներով: Քննարկեցին իրար օգնելիս նյութերը ձեռք բերելու կարևորությունը նախագծային աշխատանք կատարելու ընթացքում:
. Հարցերի՝ մտագրոհի միջոցով սովորողներին առաջարկում է վերհիշել իրենց նախագծային աշխատանքը ստեղծելու ընթացքը, աշխատանքի բաժանումը սովորողների միջև, ո՞ր ՏՀՏ – ներից են օգտվել , ի՞նչ նորարություններ են կատարել, ի՞նչ նոր բացահայտումներ են իմացել Կոմիտասի կյանքից:	. Պատմեց ին , թե որ ՏՀՏ- ներից են օգտվել , ինչպես են աշխատել, ուսուցչի խորհուրդները , աջակցությունը ինչքա՞ն է օգնել իրենց: Լրացուցիչ գրականությունից օգտվելիս ընտրել են Կոմիտասի նկարներ, որոնք կապված են իրենց բաժանված թեմաների հետ:
. Սահիկաշարի ներկայացման ընթացքում ուղղորդել սովորողներին պահպանել զետեղված տեղեկատվական նյութերի պատշաճ ներկայացմանը: Վեր հանել նոր բացահայտումները Կոմիտասի ստեղծագործությունների վերաբերյալ, օժանդակ տեսագրություններից օգտվելիս պահպանել արդեն ուսումնասիրված նյութի հաջորդականությունը, օգնել սովորողներին ներկայացնել:	. Սահիկաշարի ցուցադրությունը, ներկայացումը սկսվեց Կոմիտասի կյանքի վերաբերյալ տեղեկություններով: Մանկությանը, հետագա ուսմանը երաժշտական կրթության կատարելագործման նպատակով այլ երկրներ գնալը: Հետագայում հայ ազգային երգի տարածմանը, մշակմանը և գրի առնելու հսկայական աշխատանքը:Դրվագներ բերվեց և ցուցադրվեեց :
. Անհատական և խմբով երգեր կատարելիս ձայնակցել երեխաներին, որպեսզի երգերը կատարեն երգի բնույթին համապատասխան մաքուր և արտահայտիչ, նուրբ հնչերանգով: Անդրադառնալ աշխատանքային երգերին և հորովելներին , պարելիս հետևել ռիթմի պահպանմանը:	. Պատմեցին հետաքրքիր դեպքեր Կոմիտասի կյանքից, նրա գեղջկական երգեր, հորովելներ ստեղծելու պատմություններից: Երգեցին<<Կաքավիկ>> երգը՝ պահպանելով մաքուր հնչերանգ ,վերլուծեցին ունկնդրած հորովելը, կատարեցին<<Թամզարա>>պարը:
. Կշռադատման փուլում անդրադարձ կատարել ստեղծված նախագծային աշխատանքի <<՝ պրոդուկտի>> քննարկմանը, արդյունքին ձևավորող գնահատման գործիքներից մեկի՝ Ինքնագնահատման անիվի բացատրում և կիրառում:Առաջադրվեց <<Ո՞վ է ուզում դառնալ>> միլիոնատեր ռեսուրս:	. Ամփոփեցին իրենց ստեղծած<<պրոդուկտը>> ,անդրադարձ կատարեցին ողջ աշխատանքի ընթացքին:Սիրով կատարեցին LearningApps – ի էլ.ռեսուրսը՝ <<Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր>> խաղը: Կատարեցին Ինքնագնահատման անիվի աշխատանքը և պարզաբանցին:

<<...Երաժշտությունը որքան մեծ է՝ ազգն էլ նույնքան մեծ է...>>


Կոմիտասի ստեղծագործությունները
Հորովելներ,պարերգեր

<<...Երաժշտությունը որքան մեծ է՝ ազգն էլ
նույնքան մեծ է...>>